



**ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ
ՏԱՐԱԾԱՇԱՐՋԱՆԱՅԻՆ N2 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ**

**ԳԻՏԵԼԻՔ
ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ
ՀՄՏՈՒԹՅՈՒՆ**

Հասցեն՝ Գր. Երևան, Նոր Նորքի Մոլդովական 37Ա
 Դեռախոսներ՝ 010 672301, 672790, 093 930708, 077706050
 Կայք՝ www.college2.info, Էլ. փոստ՝ N2college@mail.ru

Քոլեջի մասնագիտություններն են.

Մասնագիտությունը	Կրթության հենքը
Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ	ինճամյա-3տարի միջնակարգ-2տարի
Մեմբերներ	ինճամյա-3տարի
Մարքեթինգ	ինճամյա-3տարի միջնակարգ-2տարի
Ապահովագրական գործ	ինճամյա-3տարի միջնակարգ-2տարի
Սպ. կազմակերպում հյուրանոցներում և զբոս. համալիրներում	ինճամյա-4տարի միջնակարգ-3տարի
Հանրային սննդամթերքի տեխնոլոգիա	ինճամյա-3տարի ճամիս միջնակարգ-2տարի ճամիս

Ընդունելության քննություններ չկան: Ընդունելությունը մրցույթային է:
 Քոլեջի լավ և գերազանց առաջադիմությամբ շրջանավարտները առանց ընդունելության քննությունների կարող են ընդունվել պետական և հավատարմագրված բուհերի 2-րդ կուրսեր:
 Ուսուցումը քոլեջում կազմակերպվում է ժամանակակից ձևերով ու մեթոդներով՝ հիմք ունենալով ավանդական մեթոդների լավագույն և արդարացված տարբերակները:
 Քոլեջը ժամանակակից վերանորոգված է, ջեռուցվում է, հագեցած է ժամանակակից գույքով, տեխնիկայով, համակարգչային սարքավորումներով: Քոլեջն ունի ինտերակտիվ լսարաններ, հարուստ գրադարան:

**ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇԱՐՋԱՆԱՅԻՆ N2 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԸ**

կազմակերպում է կարճաժամկետ վերապատրաստման դասընթացներ և տրամադրում է պետական վկայականներ հետևյալ մասնագիտություններով.

«Համակարգչային գործավար»



«Հաշվապահ»



«Խոհարար»,
«Մատուցող»
«Դրուշակագործ»



«Վարսահարդար»,
«Դիմահարդար»,
«Մատնահարդար»



«Օտար լեզուներ»



Համատիության նախագահ և թեկնածու



«Սեղանի դիզայներ»,
ֆուրշետ



«Պարարվեստ»



ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ N2 ՊԵՏԱԿԱՆ ԶՈՒԵՁ

ԳԻՏԵԼԻՔ

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

ՀՄՏՈՒԹՅՈՒՆ

Հասցեն՝ ԳԳ ք. Երևան, Նոր Նորքի Մուղրովական 37Ա
Հեռախոսներ՝ 010 672301, 672790, 093 930708, 077706050
Կայք՝ www.college2.info, Էլ. փոստ՝ N2college@mail.ru

Երևանի տարածաշրջանային N2 պետական քոլեջը՝ ի թիվս 12 փորձարարական քոլեջների, ներառվել է Եվրոպական Միության ոլորտային քաղաքականության աջակցության ծրագրի 2007թ. և 2009թ. գործողությունների պլանի համաձայն Հայաստանին տրամադրվող բյուջետային աջակցության շրջանակում իրականացվող «2007 թվականի գործողությունների ծրագրի ներքո ոլորտային քաղաքականության աջակցության ծրագիր՝ ուղղված աղքատության կրճատմանը՝ ՄԿՈՒ ոլորտներում բարեփոխումների իրականացման միջոցով» 1-ին և «Մասնագիտական կրթության ուսուցման բարեփոխման շարունակություն և զբաղվածության հայեցակարգի մշակում» 2-րդ ծրագրերում:

Վերը նշված ծրագրերի շրջանակներում քոլեջը հիմնովին վերանորոգվել է, նյութատեխնիկական բազան նորացվել է, բարեփոխվել է կառավարման համակարգը:

Քոլեջը ներառվել է նաև ՄԱԶԾ-ի կողմից իրականացվող ՄԿՈՒ ծրագրի մեջ, որի շրջանակում ձեռք է բերվել նոր գույք: Շենքը ամբողջությամբ վերանորոգվել է, վերականգնվել է ջեռուցման համակարգը, տանիքը, հարստացել է նյութատեխնիկական բազան:

Նշված ծրագրի միջոցներով քոլեջին տրամադրվել է ժամանակակից վարսավիրական կաբինետ և գույք, համակարգչային տեխնիկա, ինչպես նաև տրամադրվել է դասասենյակային կահույք, էլեկտրական սարքավորումներ, գրասենյակային կահույք, առաջին բուժօգնության, քիմիայի լաբորատորիա, ֆիզիկայի լաբորատորիա: Քոլեջը համալրվել է մարզական գույքով, խոհանոցային գույքով, ինտերակտիվ լսարանով, լինգվաֆոնային կաբինետով:



Եվրոպական Միության ոլորտային քաղաքականության աջակցության ծրագրի արդյունքում զգալի բարեփոխումներ են կատարվել ուսումնական գործընթացի, նյութատեխնիկական բազայի հարստացման և սոցիալական համագործակցության գործընթացներում:

Ուսուցումը քոլեջում կազմակերպվում է ժամանակակից ձևերով ու մեթոդներով՝ հիմք ունենալով ավանդական մեթոդների լավագույն և արդարացված տարբերակները:

Ուսուցման ժամանակակից ձևերից պետք է նշել «մոդուլային ուսուցումը», որը ուսանողների մոտ գիտելիքների, հմտությունների շնորհիվ կարողություններ է ձևավորում, որի արդյունքում էլ շրջանավարտն իր տեղն է գտնում աշխատաշուկայում:

Ջարգացել է սոցիալական համագործակցությունը շահառուների հետ՝ պրակտիկաների կազմակերպման, առաջավոր փորձի փոխանակման ուղղությամբ: Ուսանողների արտադրական պրակտիկան, որպես կանոն, անցկացվում է տարբեր կազմակերպություններում՝ կնքված պայմանագրերի հիման վրա:

Ուսուցումը քոլեջում կազմակերպվում է բարձր որակավորում ունեցող դասախոսական անձնակազմի կողմից: Վերջին հինգ տարիների ընթացքում քոլեջի ղեկավար և դասախոսական անձնակազմը վերապատրաստվել է, որն օգնում է կատարելագործել նրանց կառավարչական և մասնագիտական հմտությունները: